Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

Ս Ո Ն Ա

1

Մի քանի տարի առաջ ես ավելի երիտասարդ էի: Ես հիմա էլ եմ երիտասարդ, բայց ուրիշ էր այն ժամանակ, ուրիշ՝ հիմա: Զգում եմ, թե ինչպես անցնում են տարիները, և ես մեծանում եմ. այդ են ասում և՛ կուստոմսը գրպանումս, և՛ անընդհատ աճող մազերը դեմքիս վրա, և՛ բնավորությանս փոխվելը... Զգում եմ, որ արդեն փակվում է իմ կյանքի այն ամենալավ շրջանը, որը կոչվում է երիտասարդություն:

Բայց ես բոլորովին չեմ ցավում դրա համար, որովհետև ինձ թվում է, որ կյանքի բոլոր տարիքներն էլ հավասար չափով սիրելի են, քանի որ կյանքն ինքն է սիրելի: Ես չեմ սիրում հիշել անցած-գնացած օրերը, որովհետև միշտ ապրում եմ ներկայով: Եվ եթե չլիներ այսօր մի դեպք, ես հազիվ թե հիշեի այն ամենը, ինչը կազմում էր իմ կյանքը սրանից հինգ տարի առաջ:

Ես այսօր տեսա մի աղջկա և հիշեցի, որ մենք երբևէ ծանոթ ենք եղել միմյանց: Հիշեցի, որ մի ժամանակ ես ու նա մտերիմներ ենք եղել, և նա շատ հաճախ է ժպտացել ինձ իր կապույտ աչքերով: Նա հաճախ է նայել ինձ իր կապույտ աչքերով, որոնց մեջ ես կյանքի ամբողջ պայծառությունն եմ տեսել և գարնան շունչն զգացել...

Եվ ինչպե՜ս կապվում է այդ մտապատկերն իմ կյանքի այն շրջանի հետ, երբ ես դեռ նոր էի ոտք դնում երիտասարդության շեմքին...

Բայց գուցե չի՞ պատահել այդպիսի բան, և մենք անցյալում մտերիմներ չե՞նք եղել և ոչ իսկ ծանոթներ: Գուցե լոկ մտապատկերնե՞ր են դրանք: Այսօր, երբ Վազգենը նրա հետ միասին պատահեց ինձ և ուզեց ծանոթացնել ինձ իր կնոջ հետ, աղջիկը ձեռքն ինձ մեկնեց ճիշտ այնպես, ինչպես անում են անծանոթները:

Սակայն ես չբռնեցի այդ ձեռքը, այլ ասացի.

— Մենք վաղուց ծանոթ ենք միմյանց...

Աղջիկը չշփոթվեց: Նա միայն նայեց ինձ՝ զարմացած ձևանալով, և հարցրեց.

— Մի՞թե: Իսկ ես չեմ հիշում:

Մի քանի բռնազբոսիկ խոսքեր փոխանակելուց հետո մենք բաժանվեցինք: Գուցե ընդմիշտ:

Իմ հուշերի մեջ որքա՜ն սերտ են կապված իրար հետ երկրի արշալույսն ու իմ կյանքի արշալույսը: Առաջին բանը, որ ես հիշում եմ, այն ձիավորներն են, որոնք «Վարշավյանկա» երգելով մտան մեր քաղաքը: Դրանից առաջ ես ոչինչ չեմ հիշում հիմա և երբ աշխատում եմ մտաբերել որևէ բան, աչքիս առջև պատկերանում է արյունոտ և մոխրագույն մի քառս, ուրիշ ոչինչ...

1923 թվականն էր: Բուռն ոգևորությունների տարեթիվ էր դա: Ամենուրեք «Ինտերնացիոնալ» ու միտինգներ, ամեն շաբաթ՝ շքերթ, ամեն օր՝ պատկոմական շարքերը փողոցներում և մեր՝ կոմերիտականներիս, հակակրոնական կառնավալները:

Մեր ակումբը, որ նախկին նահանգապետի շենքն էր, օր ու գիշեր լցված էր լինում երիտասարդներով: Ցերեկները դասախոսություն էր լինում կամ երգեցիկ խմբի պարապմունք, որտեղ մենք սովորում էինք երգել «Ինտերնացիոնալ» ու «Վարշավյանկա», իսկ գիշերներն ակումբի սենյակներից մեկում պլակատներ էինք նկարում՝ հետևյալ օրվա կառնավալի համար:

Հիշում եմ այդպիսի մի գիշեր:

Վերջացրի աստծու ծաղրանկարը և գլուխս դրեցի սեղանին՝ մի քիչ նիրհելու համար: Սենյակում գտնվող մյուս յոթ-ութ ընկերները լուռ շարունակում էին իրենց աշխատանքը:

Շատ նիրհեցի թե քիչ, միայն այն եմ հիշում, որ գլուխս չափազանց ծանրացել էր և ես ուզում էի քնել, կուշտ քնել: Բայց այդ բանը համարյա հնարավոր չէր, որովհետև այդ գիշեր ուրիշ շատ աշխատանք կար անելու:

Եվ ես զգաստ նիրհում էի:

Ականջս ձայն ընկավ:

— Ս ս ս՜ ...— արեցի ես քնի միջից:

Քիչ հետո՝ նորից: Կարծես մեկը բղավելիս լիներ ականջիս մոտ: Ես գլուխս չբարձրացրի, քունս տանում էր, այլ կրկնեցի նույնը:

— Ս ս ս ս՜...

Բայց ծիծաղի սուր ձայնը, որն ինձ ոտքի հանեց, առիթ դարձավ, որ ես մի լավ բարկանամ,

— Չե՞ք կարող լուռ աշխատել...

Ընկերներից մի քանիսի ներկոտ վրձինները բարձրացան և ուղղվեցին դեպի մեղավորի կողմը: Նոր միայն տեսա Սոնային, որ կաշվե բաճկոնը հագին և կարմիր գլխաշորը կապած, կանգնել էր լուռումունջ:

— Ի՞նչ գործ ունես կեսգիշերին՝ զբաղված մարդկանց մոտ, խանգարում ես, փախիր անկողինդ,— մռմռացի ես ու նորից գլուխս կախեցի սեղանին:

Ընկերներս ծիծաղեցին:

Ես նիրհեցի:

Մի թեթև հարված կողքիս՝ ինձ ստիպեց վեր թռչել: Սոնան էր:

— Ինչ ասացի՞ր...

— Թող քնեմ, Սոնա:

— Չէ, չէ, ինչ ասացի՞ր:

— Թող քնեմ՝ ասում եմ քեզ:

— Թող քնի, հոգնած է,— միջամտեց ընկերներից մեկը:

— Չեմ ուզում, — ոտքը գետնին խփեց Սոնան,— թող ասի, թե ինչ ասաց քիչ առաջ:

— Ոչինչ:

— Չե՛մ, ասա:

— Կրակ խո չե՞ս: Ասացի՝ փախիր անկողինդ:

Ընկերների նոր ծիծաղը հարկադրեց Սոնային հարմար պատասխան փնտրել: Քիչ մտածելուց հետո նա ասաց դանդաղ.

— Դո՛ւ փախիր...

— Ա՛խ,— ասեցի ես կեղծ հառաչով,— ես էլ էդպիսի մի տեղ եմ փնտրում...

Ընկերներիցս ոչ մեկը դեռ հինգ րոպե չէր կարողանում աշխատել՝ բուռն ծիծաղի պատճառով:

— Սոնա, իսկ հարմա՞ր է անկողինդ:

— Վայ, Սոնա, ո՞ւր փախչի Արմենը, մեկ էլ ասա, ո՞ւմ մոտ:

Սոնան նստեց հաղթված, և ես շարունակեցի հանգիստ նիրհել:

Քիչ հետո, տեսնեմ, մեկն ինձ ձայն է տալիս.

— Արմեն...

— Հը...

— Այ Արմեն...

— Հը, հը...

— Գլուխդ կցավի: Եկ ես նստեմ, իսկ դու գլուխդ դիր ծնկիս ու քնիր:

Աչքերս բաց արի:

— Սոնա՞, էլի դո՞ւ ես:

— Ասում եմ՝ ծնկիս դիր գլուխդ, քնիր, հիմար, իսկ դու բարկանում ես:

— Հա՞, դե լավ,— ասացի ես՝ առանց զարմանալու Սոնայի բարեսրտության վրա և գլուխս դրեցի նրա ծնկին:— Իսկ դու փայտի նման պիտի նստե՞ս:

— Չէ, ես աստվածածին պիտի նկարեմ:

Ես նիրհեցի, իսկ քիչ հետո արդեն քնած էի խոր քնով...

Երևի Գուլիվերը, նավաբեկությունից հետո ծովափին արթնանալիս, ինձ նման է կապկպված եղել: Բայց նրա դեմքը սովորական է եղել, չներկված: Իսկ իմ դեմքը... Սեղանին դրված հայելու մեջ ես տեսա մի սատանայի: Շարժվեցի, որ ավելի լավ նայեմ, և հասկացա, որ այդ ես եմ: Ուզեցի վեր կենալ, բայց բազմաթիվ գոտիներով ու պարաններով կապկպված էի նստարանին: Սոնան անհետացել էր:

— Լավ, Սոնա, ես քո հախից կգամ:

3

Երեկոյան կողմ ղողանջում էին քաղաքի եկեղեցիների զանգակները, որոնց մեջ ավելի ուժեղ էին հնչում աստվածածնի եկեղեցու զանգերը: Քաղաքի փողոցներում անսովոր անցուդարձ կար: Դեպի եկեղեցիներն էին գնում բազմաթիվ մարդիկ, կանայք, մանավանդ՝ ծերեր և հասակավորներ:

Իսկ եկեղեցիներից մեկից մի քիչ այն կողմ, ակումբում, հավաքվում էին կոմերիտականները: Արտակարգ փութկոտություն, արտակարգ բազմամարդություն: Ընթերցարանի սեղանների վրա լրագրեր չկային, սենյակներում պարապմունքներ չկային և ոչ էլ դահլիճում՝ ներկայացում: Երևում էր, որ կոմերիտականներն այսօր հավաքվում էին իրոք որ մի արտակարգ բանի համար:

Լիք-լցված էին բոլոր սենյակները: Եվ որքան էլ շատ էինք մենք, այնուամենայնիվ, մեզանից յուրաքանչյուրն առանձնապես ծանոթ էր մյուս բոլորին՝ այդ մեծ ընտանիքի, այդ մտերիմ ընտանիքի մյուս անդամներին:

— Տղերք, Մկոն չկա:

— Ինձ հետ էր գալիս: Ճանապարհին մարդ հանդիպեց, կանգ առավ, հիմա կգա:

— Արտաշը եկե՞լ է:

— Չէ:

— Սարգի՞սը, Հակո՞բը, Ցողի՞կը:

— Դահլիճումն են:

— Արա՞մը, Հրա՞չը, Հարությո՞ւնը, Գուրգե՞նը, Սոնա՞ն, Մարո՞ն...

— Չէ, միայն Հրաչն է այստեղ: Եվ Արամը:

— Ուրեմն սպասենք մի քիչ էլ: Դեռ ուշ չէ, չէ՞:

— Չէ:

Ակումբի բակում, մի դռան մոտ, կանգնել էին տասը-քսան կոմերիտականներ և նայում էին ներս: Ներսից ինչ-որ մեկը ծածկում էր դուռը, սակայն քիչ հետո դրսում հավաքվածները նորից էին բաց անում այն և միահամուռ ծիծաղում:

— Կտեսնեք հետո, ի՞նչ եք հավաքվել: Ցրվեցեք: Մի՛ խանգարեք:

Խրատները քիչ էին ներգործում և հավաքվածների ծիծաղն ու հետաքրքրությունը չէր նվազում: Ճիշտ է, հավաքվածների մի մասը հույսը կտրած հեռանում էր, բայց հեռացողների տեղը բռնում էին ուրիշները:

— Շարքի՛,— լսվեց ինչ-որ սենյակից:

— Շարքի՛, շարքի՛,— կրկնեցին բոլորը և սկսեցին դուրս գալ փողոց:

— Երկ-երկու:

— Երեք-երեք:

— Չորս-չորս:

— Քսանչորս-քսանչորս:

Ծիծաղը պրծավ:

Եկավ Օնիկը, որին կոմերիտականները «հրամանատար» էին ասում, և բղավեց.

— Չորս-չորս...

Կարճահասակ Աշիկը, որն առաջին րոպեին չէր երևում Օնիկի ետևում, նույնպես բղավեց.

— Չորս-չորս...

Օնիկը ետ դարձավ: Շարքերում ծիծաղեցին:

— Տեղդ կայնի, ընձի օգնական հարկավոր չէ:

Աշիկը, զինվորական հաղթ քայլվածք ձևացնելով, մոտեցավ շարքերին: Աչքերով փնտրեց համեմատաբար կարճահասակ տղաների, կանգնեց նրանց մոտ:

— Տղեք ջան, գնալիս խոսել-խնդալ չէղնի,— զգուշացրեց Օնիկը,— ինչ կէնեք՝ էրեք, հըմը նամուսով գնացեք, կոմսոմոլիստի նման:

Շարքերն ուշադրությամբ լսում էին:

— Ավել-պակաս լոզունգ բաց թողնել չէղնի: Խուժանի պես չերգեք, իրար հետ, մէ ձենով... Աշիկ, փորցե լուրջ մնալ, հերիք է խնդացնես տղոցը...

Շարքերից մեկի ծայրում խոսում էին:

— Ծո՛, էդտեղ սուս, յա՛: Ուխտավորի էշ խո չի՞ զռռա, ես ձեզի հետ կխոսիմ: Բան հասկըցեք: Դուք էլ խո Աշիկը չէղա՞ք գլխուս…

Բոլորի նախատինքի ազդեցության տակ ծայրամասը լռեց:

— Տղեք ջան, երգը մտահան չէնեք: Վով օր խոսքերը հլը լավ չէ սորվե, թող գրաշար Մկոյից վերցնե: Քովը տպած-պատրաստ կա:

Շարքերում լուրջ լսում էին: Ապա, հանկարծ, բոլորի աչքերն ուղղվեցին դեպի ակումբի դուռը, և բոլորը միասին փռթկացին:

— Օրհնյա՛ ի տեր, օրհնյա՛ ի տեր...

Օնիկը ետ շրջվեց և ինքն էլ չկարողացավ զսպել ծիծաղը: Այնքան հաջող էին դուրս եկել տերտերները, տիրացուները, չարչին, բուրժուան:

Շարքերում ծայր առավ խոսակցությունը.

— Կուզիկ տերտերն ո՞վ է:

— Մկոն է:

— Կա՞րճը…

— Չի ճանաչվում:

— Տիրացո՞ւն:

— Սերգոն է:

— Չէ, Տիգրանն է:

— Սերգոն է:

— Ճիշտ է, Սերգոն է:

Եվ այդպես, ճանաչեցին բոլորին՝ մինչև Հիսուս Քրիստոսը, մինչև մայր աստվածածինը, որը Սոնան էր, մինչև բուրժուան: Բայց ոչ ոք չկարողացավ ճանաչել կարճլիկ տերտերին:

Շարքերում աղմուկ ծայր առավ:

— Կա՛րճը…

— Կա՛րճը, կա՛րճը…

Կարճլիկ տերտերը կանգ առավ, ձեռքի խաչով խաչակնքեց և որոտաց.

— Խաղաղությո՛ւն ամենեցուն:

Ականջ խլացնող հռհռոցի միջից լսվեցին ձայներ:

— Հարությունն է, Հարությունն է:

Կերպարանափոխված խումբն անցավ շարքի գլուխը:

— Էլ չեմ ըսե, հա,— կրկնեց Օնիկը:— Դուք ընձնեն լավ կհասկանաք: Աշիկ, փորցե քիչըմ բոյով էրնալ: Կարգը կխախտես:

Ամեն ինչ պատրաստ էր:

— Բան-ման պակաս չկա՞: Բան մտահան չէրի՞ք,— համենայն դեպս հարցրեց Օնիկը: Ապա մի պահ լռելուց հետո կարգադրեց.

— Պլակատնե՛րը...

Ակումբի դռնից դուրս եկան տասնհինգ-քսան կոմերիտականներ՝ ձեռքներին հակակրոնական պլակատները, որ մենք էինք նկարել անցյալ գիշեր:

Շարքերում նորից ծայր առավ աղմուկը:

— Մեր խմբին պլակատ:

— Մի հատ էլ մեզ:

— Մեզ էլ, մեզ էլ...

Օնիկն ու Հրաչն արագ բաժանեցին պլակատները: Շարքերը լռեցին:

Օնիկը ձեռքերը խողովակի նման դրեց բերանին և բղավեց.

— Առա՛ջ... Քելե՛ք... Աշիկ, մենծ-մենծ զցե ոտքերդ...

Շարքերը լուռ շարժվեցին:

Անցնելով մի քանի փոքրիկ փողոցներ, կոմերիտականների շարքերն ուղղվեցին դեպի գլխավոր փողոցը, որտեղ այդ ժամանակ շատ մարդ կար:

Անցորդներն ամբողջ փողոցով մեկ կանգնեցին մայթերի եզրերին և սկսեցին նայել: Օնիկը ձայն տվեց.

— Մկո՛, զլե՛...

Եվ Մկոն սկսեց աղիողորմ, ծիծաղից պայթեցնելու չափ ողբալի ձայնով.

Երկինք, երկիր, արքայություն

Էլ չեն տալիս մեզ զորություն.

Էլ չեն խուզվում մարդիկ հազար,

Մորուքներս տանենք բազար...

Ապա վիզը երկարացնելով և ձայնին տալով առասպելական նոտաներ, կլկլացրեց.

Կոմսոմոլի զատիկն եկա՜վ,

Վա՛յ մեր օրին, էս ի՞նչ եղ ա՜ ա՜ ա՜վ:

Ամբողջ շարքը թնդացրեց.

Կոմսոմոլի զատիկն եկա՜վ,

Վա՛յ ձեր օրին, էս ի՞նչ եղավ:

Ապա բաց թողեցինք մի քանի հակակրոնական լոզունգներ, ուռա բղավեցինք, իսկ քիչ հետո Մկոն նորից «զլեց»:

Փողոցի երկու կողմում, մայթերի վրա, ծեփ կանգնած էր ժողովուրդը: Մարդկանց մեջ ծայր առավ ծիծաղը, անվերջ ծիծաղը և ծափահարությունը: Իսկ հասակավորներն ու պառավները խաչակնքում էին և երեսները շուռ տալիս:

Ու մինչդեռ փողոցում հավաքվում էին մարդկանց նոր և նոր խմբեր, մեր շարքերն անցան առաջ և թեքվեցին մի ուրիշ փողոց:

— Դեպի Փրկչի ժամը,— ձայն տվեց Օնիկը:

Շարքերն ուղղվեցին դեպի այն կողմ: Երբ բավական մոտեցել էինք, Մկոն նորից «զլեց»: Շարքերը խմբովին թնդացրին երգի կրկնողությունը: Եկեղեցու մի քանի դռներից դուրս թափվեցին ներսում գտնվողները և հենց այնտեղ էլ քարացան:

— Մեղա՛ քեզ, աստված, մեղա՛, մեղա՛...

— Աստծու կրակը թափվի ձեր վրա, կոմսոմոլներ...

Իսկ մեր շարքերից.

— Կրոնն աֆիոն է, որ թունավորում է մասսաների ուղեղները:

— Կորչի՛ կրոնը:

— Կեցցե՛ գիտությունը:

— Ուռռա՛…

— Կեցցե՛ կոմունիզմը։

— Ուռռա՛…

Եվ նորից, շարունակելով «կոմսոմոլի զատիկը», շարքերը շարունակեցին ճանապարհը։

— Դեպի սուրբ Գրիգոր Լուսավորիչը,— հրահանգեց Օնիկը, և շարքերն ուղղվեցին դեպի այն կողմ։

Եվ այնտեղ՝ նորից նույնը։

Աստվածածնի եկեղեցին, իբրև ամենաբազմամարդն ու ամենակարևորը, մենք թողել էինք վերջին հերթին։

Եվ երբ Օնիկը վերջապես ձայն տվեց.

— Դեպի սուրբ կույս մայրիկ Մարիամ մայր աստվածածինը,— ամբողջ շարքերով, ծայրեծայր, անցավ ուրախ բացականչությունների ու շշունջների ալիքը։

Մկոն մաքրեց կոկորդը։ Պլակատներն ավելի բարձրացան։ Շարքերն ավելի աշխուժացան։

— Մարիամ աստվածածին, առաջ արի,— ասաց Օնիկը։

Սոնան անցավ ամենից առաջ։ Այդ բոլոր նախապատրաստություններից հետո շարքը նորից շարժվեց։

— Սոնա, գեղգեղա։

Սոնան սկսեց բարակ ձայնով.

Հայր Հովսեփը ամուսինս էր,

Հայր աստվածը՝ սիրականս,

Հազար ջահել հրեշտակներ

Գիշեր-ցերեկ լիքն էր տանս։

Ո՞րն է հայրդ, Հիսուս, ասա,

Հայր Հովսե՞փը, թե հայր աստված։

Այնքան ողբերգական էր երգում Սոնան, որ շարքերը թուլանում էին անձայն և զսպված ծիծաղից։ Կրկներգն ուշացավ։

Օնիկն ուզում էր հրահանգել, բայց երևում էր, որ նա ևս չէր կարողանում պահել ծիծաղը.

— Դե՛, տղե՞ք... Իհի՛, իհի՛, հի՛... Դե, տղե՞ք, երգը կրկնեք... Իհի՛... Մտեհա՞ն էրիք... Իհի՛, իհի՛...

Օնիկի մեջընդմեջ ծիծաղն ամեն ինչ լրացրեց: Շարքերում պայթեց հռհռոցը...

— Օհո՛-հո՛...

— Իհի՛-հի՛...

— Էհե՛-հե՛...

Բայց հանկարծ, կարծես հրահանգով, բոլորս լռեցինք: Մոտենում էինք եկեղեցուն:

— Մկո՛, զլե՛...

Մկոն զլեց: Եկեղեցուց դուրս թափվեցին աղոթականները: Դուրս թափվեցին նաև տերտերներն ու տիրացուները, մեկի ձեռքում՝ աղոթագիրք, մյուսի ձեռքում՝ բուրվառը, երրորդի մոտ՝ խաչվառ...

— Մկո՛, զլե՛...

Բայց ոչ թե Մկոն, այլ ամբողջ շարքը «զլեց»: Երգի ձայնի մեջ խլանում էին աղոթական կանանց զարմանքի ու վրդովմունքի մրմունջները:

Չգիտես որտեղից մի քանի կոմերիտականներ գտան մի սեղան և բերեցին: Հրաչը բարձրացավ սեղանի վրա:

— Ըներ՛նե՛ր...

Եվ սկսեցին միտինգը: Տերտերները, տիրացուները, աղոթականները, մոռացած ամեն ինչ, լսում էին: Մի տիրացու ձեռքի բնազդական շարժումով դեռ բուրվառում էր հավատացյալներին և ոչ հավատացյալներին:

— Ձայնը տրվում է Մարիամ աստվածածնին...

Բայց հազիվ էր Սոնան բարձրացել սեղանի վրա, երբ մի քանի հարբած հավատացյալներ հարձակվեցին մեզ վրա:

— Տո, դուք ո՞ւմ ասպածածնան ձեռ առնեք, ես ձեր մեծ ու պստիկը,— ասաց մեկն ու նետվեց դեպի Սոնան: Մյուսները հետևեցին նրան:

— Է՛յ, է՛յ, քաղաքացիներ, խենթացե՞լ եք, ի՞նչ է,— բղավեցին շարքերի միջից:

Կոմերիտականներն զգաստացրին անկարգություն անողներին:

— Շարքե՛րը,— լսվեց Օնիկի ձայնը: Բոլորս նորից կանգնեցինք շարք և վերադարձանք: Ճանապարհին մենք մտահոգված վիճակում էինք այն մասին, որ կրոնի դեմ մեր պայքարը շատ թերի կողմեր ունի, որ կառնավալները պայքարի հիմնական ձևը չեն: Բայց այդ

մասին ավելի լուրջ խոսակցությունը թողնելով մի ուրիշ անգամի, մենք նորից ողողեցինք փողոցները մեր երգի հնչյուններով.

Կոմսոմոլի զատիկն եկավ,

Վաղ ձեր օրին, էս ի՞նչ եղավ...

Մութն էր, երբ վերադարձանք:

Սոնան և մյուսներն սկսեցին հանել իրենց հագուստները և նորից վերածվել կոմերիտականների:

Մոտեցա Սոնային:

— Սոնա...

— Ի՞նչ:

— Եկ ասեմ:

Սոնան մոտեցավ: Նայեցի շուրջս: Սենյակում մարդ չկար:

— Եկ, ականջիդ բան եմ ասում:

Սոնան ականջը մոտեցրեց դեմքիս, բայց ես, փոխանակ բան ասելու, համբուրեցի նրա այտը:

— Կերա՞ր... Էս էլ քեզ երեկ գիշերվա պատասխանը:

— Վա՛յ, ինչքան վատն ես,— մրմնջաց Սոնան:— Ամոթ ինձ, թե ուրիշ անգամ քեզ հետ մենակ մնամ:

Ես դուրս ելա սենյակից՝ գոհ սրտով, որ լավ վրեժխնդիր եղա Սոնայից:

Համբույրը ոչ մի տպավորություն չթողեց ինձ վրա, և ես շուտով մոռացա այդ:

4

Երիտ-ակումբում, բացի ակումբի թատերական սեկցիայից, կար նաև մի ուրիշ՝ շրջիկ թատերական խումբ, որը հայտնի էր Նիկոլի խումբ անունով:

Երբ ես մտածում եմ այդ շրջիկ խմբի մասին, աչքերիս առջև պատկերանում է Նիկոլը՝ հատակի խոզանակը ձեռքին, վերարկուն թարս հագած:

Նիկոլի խումբը: Ո՞ւմ հայտնի չէր այն: Դժվար թե որևէ ակումբում կամ դահլիճում դասախոսություն ու ժողով տեղի ունենար՝ առանց Նիկոլի խմբի ներկայացման: Հրավիրում էին: Իսկ եթե չհրավիրեին, Նիկոլն ինքը կգնար «համապատասխան մարդու» մոտ և կասեր.

— Ընկեր, մենք ուզում ենք ձեր ժողովից հետո ժողովականների համար բեմադրել մի քանի փոքրիկ կոմեդիաներ: — Խնդրեմ: Բայց ինչո՞ւ նախապես չասացիք, որ նախապատրաստություն տեսնեինք:

— Ոչինչ, մենք ամեն ինչ պատրաստել ենք:

— Խնդրեմ, խնդրեմ...

Նիկոլի խումբն իր բազմաթիվ կոմեդիաներով շրջում էր ակումբից ակումբ, գյուղից գյուղ: Հաճախ, մի օրվա ընթացքում, նրանք ներկայացում էին կազմակերպում երկու և նույնիսկ երեք տեղում:

Շատ հազվադեպ էր, որ Նիկոլի խմբի ներկայացումները լինեին վճարովի: Եվ այդ էլ՝ այնպիսի դեպքերում էր պատահում, երբ խումբը գրիմի և այլ պիտույքների կարիք էր ունենում կամ ուզում էր գնալ որևէ գյուղ և ճանապարհածախս էր հարկավոր լինում:

Այդպիսի դեպքերում Նիկոլի ձեռագիր աֆիշաները լինում էին մեկից ավելի և փակցվում էին աչքի ընկնող տեղերում:

Ահա դրանցից մեկը.

«Երեքշաբթի, հունիսի 6–ին, երիտ–ակումբում, շրջիկ թատերական խումբը, Նիկոլի ղեկավարությամբ, կբեմադրի «Կորչի բուրժույ» կոմեդիան, 1 գործողութ., հեղ. Նիկոլի: Ռեժիսյոր՝ Նիկոլ: Գլխավոր դերերում՝

(այբբենական կարգով)

Նիկոլ, Արուս, Բագրատ, Գրիգոր, Դայդայ, Թամարա, Լյուսի և այլն: Ադմինիստրատոր՝ Նիկոլ: Տոմսերը կարելի է գնել ներկայացման օրը՝ դրամարկղում և մինչև ներկայացման օրը՝ Նիկոլի մոտ»:

Իսկ աֆիշայի ներքևի մասում, մի կողմում՝

«Սկիզբը ժամը 8-ին»

, մյուս կողմում՝

«Բեմադրություն՝ Նիկոլի»

:

Շատ կարևոր էր վերջին հանգամանքը:

Բեմադրություն Նիկոլի՝ դա նշանակում էր, որ պիեսի մեջ պետք է լինեին ուտելու առնվազն երեք տեսարաններ, որտեղ բուրժույներն ուտում են, ուտում են տրաքվելու չափ, իսկ դահլիճում ծիծաղում է ժողովուրդը:

Ոչ մի դեկորացիա, ոչ մի բուտաֆորիա հարկավոր չէր Նիկոլին: Միայն հաց, պանիր և մի քիչ էլ վարունգ ու կանաչի: Նա գիտեր այդ բոլորից պատրաստել մի ցոփ սեղան, որտեղ բուրժույները պետք է ուտեին: Այդքան բառացի և անմիջականորեն էր հասկանում Նիկոլը բուրժուազիայի գիշատիչ և «ուտող» էությունը:

Որպեսզի լավ «խաղա», Նիկոլը ներկայացումների օրերին համարյա ոչինչ չէր ուտում: Եվ իրոք, երեկոյան նա «խաղում» էր շատ լավ: Նայում էին դահլիճում հավաքվածները, կուշտ ծիծաղում և ծափահարում: Երբ ներկայացումը վերջանում էր, Նիկոլն իր խմբով վազում էր դեպի մի ուրիշ ակումբ՝ այնտեղ ևս չորս-հինգ հատ փոքրիկ կոմեդիաներ «ուտելու»:

Նրա խումբը բաղկացած էր տասը-տասներկու հոգուց: Դրանցից ոչ մեկը դժգոհ չէր Նիկոլի դերաբաժանումներից, թեև միշտ էլ առյուծի բաժինը՝ գլխավոր դերը, վերցնում էր ինքը՝ անխուսափելի Նիկոլը:

Ահա այդ խմբի հետ էր, որ ես ու Սոնան, նաև մի քանի ուրիշ կոմերիտականներ, առաջին անգամ գնացինք գյուղերն էքսկուրսիայի:

Սկսվեց այսպես:

Ամառ էր: Արևը պայծառ փայլում էր քաղաքի վրա: Մի օր, ցերեկով, ակումբում տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը:

— Գյուղ չգնա՞նք,— հարցրեց Սոնան:

— Իսկապես, բավական ժամանակ է, որ չենք գնացել,— ասաց մի ուրիշը:— Հարկավոր է:

— Այո, Հրաչիկ: Իսկ դո՞ւ ինչ ես ասում, Ցողիկ:

— Գնալ, գնալ, անպայման:

Պարզվեց, որ բոլորը տրամադիր են:

Մեկն առաջարկեց.

— Նիկոլի խումբն էլ կտանենք մեզ հետ:

— Հա, կտանենք, ճիշտ որ, շատ լավ կլինի: Ներկայացում կտան, ժողովուրդ կհավաքվի:

— Կգա՞ս, Սերգո:

— Կգամ: Կգա՞ս, Սոնա:

— Կգամ: Կգա՞ս, Հարություն:

Համաձայնությունը շատ շուտ կայացավ: Որոշեցինք շաբաթ երեկոյան մեկնել, կիրակի օրը մնալ և երկուշաբթի վերադառնալ: Ընտրեցինք մի հեռավոր գյուղ:

Գյուղը, ուր պետք է գնայինք, ուներ բեմ և դահլիճ, որ գտնվում էր դպրոցի շենքում: Իսկ դպրոցի շենքը գյուղի ծայրին էր, մի փոքրիկ բլուրի վրա: Մի ժամանակ եկեղեցի էլ էր եղել

այդտեղ, որը հետո փուլ էր եկել և ժամանակի ընթացքում բոլորովին քանդվել: Բլուրի վրա մնացել էր միայն դպրոցի շենքը:

Երբ մենք հասանք գյուղ, արդեն մութն էր: Երևում էին ճրագի շատ փոքրիկ լույսեր: Դպրոցում լույս չկար: Մեզանից մեկը՝ Կարոն, որ ծանոթ էր այդ գյուղին, մեզ ուղեկցեց գյուղխորհրդի նախագահի տունը:

— Այ ասսու բարին, կոմսոմոլներ,— ողջունեց նախագահը՝ ժպտալով:— Ներս եկեք, համեցեք:

— Շնորհակալ ենք, ընկեր նախագահ: Մենք եկել ենք էքսկուրսիայի և ուզում ենք վաղը երեկոյան մի ներակայացում ու մի դասախոսություն տալ... Կօգնե՞ք:

Նախագահը թևերը կանթեց մեջքին:

— Աչքիս վրա, կոմսոմոլներ:

Իսկ քիչ հետո, նորից.

— Ներս եկեք, դռան մեջտեղն ինչի՞ եք կանգնել: Շատ էլ որ կոմունիստի տուն չի, խո կուլակի տուն էլ չի՞,— կատակի տվեց նա:

Մենք ծիծաղելով մտանք ներս: Նախագահի կինը ոտքի կանգնեց և ուզում էր մեր ձեռքը համբուրել, բայց չկարողացանք հասկանալ, թե ինչ միջոցով նախագահը սաստեց նրան՝ այսպիսի բան չանել:

— Մի տեղ կարո՞ղ եք գտնել, որ այսօր ու վաղը քնենք,— հարցրեց մեր ընկերներից մեկը:

— Վայ: Էդ ի՞նչ խոսք է, իմ տունը տուն չի՞: Ուզում եք՝ մի շաբաթ մնացեք:

— Բայց ընկեր նախագահ, նեղություն կտանք ձեզ: Ախր շատ ենք, տասնութ հոգի:

— Նեղությունն ի՞նչ խոսք է: Օդան՝ մեծ, ծալքի մեջ էլ հո, փառք...— Նա կուլ տվեց շարունակությունը:— Տեղաշորը պակաս չի:

Մնացինք նախագահի մոտ: Հավաքվեցին մի քանի դրկիցներ: Նրանք հետաքրքրությամբ նայում էին մեզ, բայց առավել ևս՝ Սոնային, որը միակ աղջիկն էր մեր մեջ: Մանավանդ նրա կարմիր գլխաշորն ու կաշվե բաճկոնը շատ էին զարմացրել նրանց:

Նախագահը խոսում էր մեզ հետ պարենտուրքի մասին, գյուղի գործերի, հարցնում էր մեր մասին: Մի ժամի չափ այսպես զրուցելուց հետո նա դարձավ իր կնոջը.

— Աղջի, տեղ գցի: Ճամփա են եկել, բեզարած կլինեն:

Կինն սկսեց օդայի լայն երկու և երկար թախտերի վրա անկողիններ փռել մեզ համար:

— Շատ ջահել եք, դեռ ձեր կյանքի գինը չգիտեք: Որ ասեմ՝ մինչև լույս նստենք՝ կնստեք: Բայց շուտ քնողը շուտ էլ վեր կկենա, առավոտվա հովին կզարթնի, համ առողջ կլինի, համ էլ գործունյա...

Ձայնը ցածրացնելով նա հարցրեց.

— Օրիորդը որի՞դ կողակիցն է. ուզո՞ւմ եք՝ կողինքը փռել տամ հացատանը...

Բարձրացավ անասելի ծիծաղ:

— Ընկեր նախագահ, մենք բոլորս էլ ամուրի ենք: Սոնան էլ:

— Հա՞,— հարցրեց նախագահը:— Ախր ես ասի, որ էդպես կլինի:

Բայց երևում էր, որ նա շատ զարմացավ, թե ինչպե՞ս կարող են տասնյոթ տղաներ առանց բացառության ամուրի լինել:

Հանվեցինք քնելու: Սոնան նստած սպասում էր, ապա հարցրեց.

— Պրծա՞ք:

— Պրծանք:

— Փուհ,— փչեց ճրագը նա և նույնպես հանվեց:

Քիչ հետո բոլորս էլ քնեցինք:

5

Մինչև այստեղ ես քեզ այսպես եմ հիշում, սիրելի Սոնա: Հիշում եմ մեր ընկերական այն լավ կյանքը, քեզ՝ իբրև սիրելի ընկերուհու: Իսկ դրանից հետո իմ հուշերն արդեն ուրիշ գույն ունեն, և դու ուրիշ տեղ ես գրավում իմ հոգում...

Երեկոյան մենք քնեցինք, իսկ հետևյալ օրվանից ես սիրում էի քեզ, Սոնա:

Ինչո՞ւ համար այդպես հանկարծակի պատահեց այդ բանը:

Նրա համար, որ արդեն ժամանակն էր իմ սիրելու և միայն մի փոքր առիթ էր պետք, որ դու իմ սրտում ընկերուհուց վերածվեցիր սիրեցյալի:

Նրա համար, որ այդ օրը ես առաջին անգամ տեսա, թե ինչպես քո կարմիր գլխաշորի ու կաշվե բաճկոնի տակ ամաչկոտ թաքնվել էր աղջիկը...

Ներկայացումը վերջացնելուց հետո դերակատարներն ամեն կերպ, ինչպես որ կարող էին, մաքրում էին իրենց դեմքերը գրիմից: Դու մասնակցել էիր ներկայացմանը և քո դեմքի վրա էլ կային գրիմի հետքեր: Կարոն մի շորի կտոր էր վերցրել և սրբում էր քո այտերը:

— Ի՛հ, լավ չես կարողանում մաքրել,— ասացիր դու և հարցրեցիր,— ջուր կա՞:

Ջուր չկար:

— Առուն մոտիկ է,— ասաց Կարոն,— գնա լվացվիր:

Տղաների քունը տանում էր, նրանք շտապում էին քնել, և ոչ ոք չուզեց ընկերակցել քեզ մինչև առուն: Ես ասացի.

— Գնանք, Սոնա:

— Չեմ գա քեզ հետ, դու համբուրում ես,— ասացիր դու, ապա դարձար մյուսներին,— դե, ձեզանից մեկն էլ թող գա ինձ ու Արմենի հետ:

Այդպես էլ եղավ:

Սոնա, ինչի՞ցն էր այն, որ դու շատ լավ ասացիր այդ: Ես նայեցի քեզ և առաջին անգամ բուռն ցանկություն ունեցա համբուրելու քեզ, պինդ, պինդ համբուրելու շրթունքներդ և ասելու.

— Հը, վախենո՞ւմ էիր իմ համբույրից, դե առ...

Երբ այդ գիշեր պառկեցինք քնելու, ես երկար ժամանակ չկարողացա քնել և մտածում էի: Անցյալում պատահած չնչին մանրամասնություններ, փոքրիկ դեպքեր այժմ ուրիշ կերպ էին երևում աչքիս: Ես հիշեցի, թե ինչպես մի անգամ գլուխս դրել եմ ծնկիդ և քնել: Գլխապտույտ առաջացնելու աստիճան հաճելի էր ինձ համար այժմ այդ հուշը: Ինչպե՞ս չէի զգացել այն ժամանակ... Հետո հիշեցի, թե ինչպես համբուրել եմ քեզ: Ես համբուրե՞լ եմ Սոնային՝ մտածում էի ես՝ հուզմունքից այրվող դեմքով: Համբուրել եմ Սոնային... Բայց ինչո՞ւ համար այդ բանն ինձ վրա ոչ մի տպավորություն չէր թողել մինչև հիմա... Մի՞թե, մի՞թե ես համբուրել եմ քեզ, Սոնա...

6

Շատ բան փոխվեց այդ օրվանից:

Չգիտեի, գուցե Սոնան նկատել էր իմ վերաբերմունքի փոխվելն իր հանդեպ: Ես նրա հետ այժմ անհամարձակ էի խոսում և այլևս առաջվա նման ընկերական անփութությամբ կատակներ չէի անում: Մանավանդ խուսափում էի այն կատակներից, որոնց ընթացքում ես կարող էի բռնել նրա թևը, խփել ուսին և այլն: Այդ բոլորի մեջ ես այժմ նոր իմաստ էի դրել և նոր բովանդակություն:

Ինձ թվում էր, որ Սոնան նկատել էր փոփոխությունը: Նա, որ մյուս բոլորի հետ առաջվա նման պարզ էր և ընկերական, ինձ հետ խոսելիս, մանավանդ երբ ես ու նա առանձին էինք լինում, դառնում էր սակավախոս ու լուռ: Կարծես խոսելու ոչ մի բան չկար: Մենք ինչ-որ անհարմար դրության մեջ էինք գտնվում: Երբեմն այդ դրությունն ինձ թվում էր սպասողական:

Մի օր, կեսօրին, ես ներս մտա ակումբ և գնացի ընթերցարան, որի լուսամուտները նայում էին դեպի ակումբի բակը: Սոնան ընթերցարանումն էր: Նրան տեսնելուն պես ես թողեցի կարդալու միտքը և կանգնելով լուսամուտի մոտ, սկսեցի նայել դուրս: Քիչ հետո ես դուրս ելա բակ: Ձեռքերս դրի գրպաններս և կանգնեցի դռան մոտ: Ոչնչի մասին չէի մտածում:

Քիչ հետո բակ դուրս ելավ նաև Սոնան: Ինձ տեսնելով դռան մոտ կանգնած, նա արագ անցավ և գնաց դեպի ընկուզենին:

«Կանգ չառավ ինձ մոտ»,— մտածեցի ես:

Սոնան մի ձեռքով ընկուզենուն հենված, մտածկոտ կռացրել էր գլուխը և նայում էր իր ոտքին, որի ծայրով խաղում էր գետնի հետ:

Մոտեցա նրան:

— Բարև, Սոնա...

— Բարև...

«Ի՞նչ խոսեմ»,— մտածեցի ես: Մտքերս չէին կենտրոնանում: Եվ լուռ կանգնեցի մի քանի րոպե:

Կաշվե բաճկոնը նրա հագին էր: Կոճակները քանդված էին և տակից երևում էր նրա մուգ կարմրագույն շրջազգեստը: Ես նայեցի նրա շրջազգեստին:

«Ինչքա՜ն է սազում»,— մտածեցի ես:

— Սոնա...

— Ի՞նչ...

— Դու ինչո՞ւ ես կաշվե բաճկոն հագնում...

Սոնան, շարունակելով խաղալ ոտքով գետնի հետ, պատասխանեց.

— Սիրում եմ:

— Գիտե՞ս, Սոնա, առանց այդ բաճկոնի ավելի լավ է, չե՞ս հանի...

— Ինչո՞ւ ես ուզում, որ հանեմ...— կամացուկ հարցրեց նա:

— Որպեսզի երևա, թե...— ես ընդհատեցի: Նա նայեց ինձ:— Երևա, թե որքան գեղեցիկ ես դու...

Սոնան ուզում էր պատասխանել: Այդ րոպեին Վազգենը դուրս եկավ բակ և բղավեց.

— Սոնա, եկ, արդեն հավաքվել ենք:

Սոնան հանկարծակի փոխվեց, ծիծաղեց և պատասխանեց.

— Եկա:

Եվ վազեց:

Ես նստեցի ծառի տակ և սկսեցի մտածել: Ինչո՞ւ է նա փոխվել իմ նկատմամբ... Այ, խոսեց մի ուրիշը, և նա դարձյալ նախկինն է...

Ինչո՞ւ է փոխվել...

7

Մի քանի օր հետո, ակումբում, նորից հանդիպեցի Սոնային:

Մի քանի ընկերներ հավաքվել էինք բակում և զրուցում էինք: Բակ մտավ Սոնան: Նայեցի նրան և սիրտս գաղտագողի տրոփեց: Նա հանել էր կաշվե բաճկոնը և քանդել էր կարմիր գլխաշորը: Հագին ուներ այն մուգ կարմիր շրջասզգեստը: Կարճ կտրված մազերը գեղեցիկ բոլորվել էին նրա գլխի շուրջը: Ուրախ մոտեցավ հավաքվածներին:

— Օհո՛, Սոնա:

— Սոնա, փոխվել ես:

— Սոնա, իսկական աղջիկ ես դարձել:

Ես չէի ուզում երևալ օտարոտի տրամադրության մեջ, ուստի նույնպես, ժպիտով դիմեցի Սոնային.

— Այ, այսպես շատ գեղեցիկ ես:

Սոնան նայեց ինձ:

— Գիտե՞ս, չկարծես, թե քո խոսքերի պատճառով եմ հանել բաճկոնս:

Ապա դարձավ մյուսներին.

— Անցյալ օրն ինձ ասում էր՝ բաճկոնդ հանիր՝ կգեղեցկանաս: Հիմա հանել եմ, նա էլ պիտի կարծի, թե իր խոսքերի ազդեցության տակ...

Ու ծիծաղեց:

Իսկ ես շփոթվեցի: Ինչո՞ւ հիշեցրեց մեր առանձին խոսակցության մասին, և այն էլ՝ այսպիսի ձևով...

Առանձնացա: Նստեցի և սկսեցի մտածել: Ի՜նչ միամիտն եմ: Իսկ ես կարծում էի, թե նա էլ ինձ էր սիրում: Բայց ահա նա առաջին իսկ պատեհ առիթին կատակի վերածեց այն, որը, իմ կարծիքով, մի բանի սկիզբ էր...

Բայց ոչ, դու ինձ չես խաբի, Սոնա: Դու ինձ համար ես հանել կաշվե բաճկոնդ և քանդել գլխաշորդ...

Իմ մեջ սկսեցին կռվել երկու միտք: Ի՞նձ համար է հանել, թե ոչ... Ես չէի կարողանում հասկանալ: Այդ անորոշության մեջ անցան օրեր:

Շատ հաճախ պատահում էր այդ օրերին, որ ես վճռում էի գնալ Սոնայի մոտ և ամեն ինչ ասել նրան: Ինձ թվում էր, թե նա կլսեր լրջությամբ և ուշադրությամբ, ապա կժպտար և կփաթաթվեր ինձ...

Բայց հանկարծ հիշում էի, թե ինչպես նա ուրիշների մոտ խոսեց այն համբույրի կամ բաճկոնը հանելու մասին: Մի՞թե վաղը ևս վեր չի կենա և չի պատմի բոլորին, որ ես սիրում եմ նրան: Կպատմի ու կծիծաղի, կծիծաղեցնի մյուսներին էլ: Իհարկե, եթե չի սիրում ինձ՝ ճիշտ այդպես կվարվի...

Իսկ ես ի՞նչ գիտեմ, սիրո՞ւմ է, թե ոչ...

8

Այս ամբողջ պատմության հետ սերտ կապված է քաղաքից իմ հեռանալու դեպքը: Ո՞վ գիտե, թե մի այդպիսի դեպքն ինչպիսի փոփոխություններ կարող է մտցնել մարդու կյանքում: Եթե ես քաղաքից չհեռանայի, չտեղափոխվեի ուրիշ քաղաք, ո՞վ գիտե, թե ինչպես պիտի դասավորվեր իմ ու Սոնայի պատմությունը:

...Ամեն տեղ երիտ-ակումբ կա և ամեն տեղ կան ընկերներ: Ամեն ակումբ ունի իր Վազգենն ու Ցողիկը, Մարգոն ու Աշիկը, Սոնան ու Կարոն... Ամեն տեղ ես կգտնեմ ինձ ընկերներ: Ամեն տեղ կունենամ մտերիմ Կարո, չարաճճիությամբ լցված եռանդուն Վազգեն և վիճաբանության մարմաջով բռնված «հակառակորդ» Ցողիկ... Բայց դժվար թե ես մի ուրիշ Սոնա գտնեմ այնտեղ, որովհետև միևնույնն է, ես նրան չեմ փնտրելու, քանի որ ինձ սիրելի է իմ Սոնան...

Մտա ակումբ, մնաս բարև ասացի ընկերներիս և դուրս ելա: Փողոցում ինձ հանդիպեց Սոնան, որը դեպի ակումբ էր գալիս: Բայց ինձ թվում էր, որ երբ ես մտա ներս, նա ակումբումն էր և հետո դուրս ելավ՝ երևի ինձ հետ մենակ հանդիպելու համար...

Բայց ինչո՞ւ պիտի այդպես լիներ:

— Մնաս բարև, Սոնա,— ասացի ես տխուր:

— Գնո՞ւմ ես,— հարցրեց նա, և նրա ձայնի մեջ ես չնկատեցի տխրության ոչ մի շեշտ:

— Գնում եմ...

Մի քիչ տեղ քայլեցինք միասին: Ես մտածում էի, որ երբ հասնենք անկյունին, կբռնեմ նրա ձեռքը և կասեմ.

— Սոնա, ես սիրում եմ քեզ: Ուզում ես՝ ծիծաղիր ինձ վրա, ուզում ես՝ ոչ: Մտածիր և պատասխանիր նամակով:

Ապա կթողնեմ նրան և արագ կհեռանամ:

Բայց պատահեց ուրիշ կերպ: Դեռ անկյունին չհասած, Սոնան ծիծաղեց ինքն իրեն և խորհուրդ տվեց ինձ.

— Աշխատիր այնտեղ էլ չհարձակվել աղջիկների վրա և համբուրել: Գնաս բարև:— Ապա նորից ծիծաղեց ու հեռացավ:

«Միամիտ,— ասացի ինքս ինձ,— կատակը լուրջ ես ընդունել և կարծել ես, թե նա էլ քեզ է սիրում: Նույնն է Սոնան, ոչինչ չի փոխվել նրա մեջ քո հանդեպ: Ես եմ միայն, որ սիրում եմ և զրկվել եմ դիմացինին ճիշտ հասկանալու ընդունակությունից...»:

9

...Հետո՝ այդ քաղաքը:

Հասարակական աշխատանքների ծովի մեջ որոշ ժամանակ խլացան իմ բոլոր անձնական զգացմունքները: Այսինքն՝ ոչ թե խեղդվեցին, այլ քաշվեցին ետ, թաքնվեցին:

Վեց ամիս ես աշխատում էի և վեց ամիս շարունակ չէի հիշում այդ փոքրիկ պատմությունը: Երբեմն միայն, երբ նամակ էի գրում ընկերներիս, բարևում էի նաև Սոնային:

Եվ այսպես անցան վեց ամիսները:

Մի օր, երբ տանը նստած էի և չէի հիշում, թե ինչով էի զբաղված, դուռը թակեցին:

Բաց արեցի:

— Սոնա՞...— սառեցի ես դռան շեմքին:

— Ես եմ, բարև, Արմեն...

— Սոնա... Չեմ հավատում աչքերիս...

— Եկել ենք էքսկուրսիա,— հայտնեց նա:— Ես ազատ ժամանակ գտա և եկա քեզ տեսնելու: Հին ընկերներ ենք, չէ՞...

— Շնորհակալություն, Սոնա... Մտիր ներս:

Սոնան ներս եկավ, նստեց: Ես ևս նստեցի, և սկսեցինք խոսել: Նա հագնվել էր ավելի կանացի և այդ զգեստի մեջ ավելի գեղեցիկ էր: Ո՞ւր կաշվե բաճկոնը, ո՞ւր սա...

— Ինչքա՜ն ես փոխվել,— ասաց նա ինձ:— Շատ ես փոխվել:

Ապա մի քիչ լռելուց հետո.

— Ախր ժամանակ է անցել...

— Սոնա,— ասացի ես,— լսիր: Անցած բաների մասին խոսելը ներելի է: Ես քեզ մի բան պիտի հարցնեմ: Չծիծաղես:

— Չէ, ինչո՞ւ պիտի ծիծաղեմ,— շշնջաց նա:

— Սոնա... Դու գիտեի՞ր, որ ես սիրում էի քեզ...

Նա ժպտաց՝ մի փոքր թախծոտ.

— Գիտեի:

— Իսկ դու չէի՞ր սիրում ինձ...

— Ոչ,— պատասխանեց նա՝ մի վայրկյան լռությունից հետո:

— Ես այդպես էլ գիտեի: Նույնիսկ վերջին րոպեին, երբ ես մնաս բարև ասացի քեզ, դու կատակ արեցիր և ծաղրեցիր ինձ: Իհարկե, չէիր սիրում:

— Ուրիշ խոսելու բան չկա՞,— հարցրեց նա ժպտալով, ապա հանկարծ բացականչեց.— Հա, ճիշտ որ: Գիտե՞ս ինչու եմ եկել քեզ մոտ: Դու այս վեց ամսում անշուշտ արդեն լավ ծանոթացել ես քաղաքին ու նրա շրջապատին: Գնանք, ցույց տուր ինձ հետաքրքիր վայրերը:

Դուրս ելանք:

10

Այստեղից նորից սկսվում է լավ հուշ: Հուշը այն մասին, թե ինչպես մենք դուրս ելանք տնից և ինչպես մեր ոտքերը մեզ տարան քաղաքից դուրս՝ դեպի այգիները: Կարծես դրանք էին քաղաքի ամենահետաքրքիր վայրերը:

Ճանապարհին ես և Սոնան համարյա ոչինչ չէինք խոսում, մտածկոտ էինք: Թվում էր, որ ես գիտեմ, թե ինչ է մտածում նա, և նա էլ, իր հերթին, գիտեր իմ մտքերը:

— Հոգնեցի,— ասաց նա և նստեց մի ծառի տակ:

Ես կանգնած էի նրա մոտ:

— Նստիր,— ասաց նա:

Նստեցի: Դարձյալ լուռ էինք:

Քիչ հետո Սոնան հարցրեց կամացուկ.

— Իսկ հիմա չե՞ս սիրում...

Ես անմիջապես չպատասխանեցի: Նախ մտածեցի հարցնել՝ ի՞նչը չեմ սիրում: Իբրև թե չգիտեմ ինչի մասին է խոսում: Հետո թողեցի այդ միտքը:

— Սիրում եմ, Սոնա, առաջվանից ավելի...

Սոնան նայեց ինձ և մեղմ ժպտաց: Նրա աչքերում ես կարդացի պատասխանը:

— Իհ, ի՞նչ ենք մուկն ու կատու խաղում, Սոնա: Ես գիտեմ, որ դու էլ ինձ ես սիրում: Զուր տանջում ենք իրար,— ասացի ես և գրկեցի նրան:

Այս անգամ նա բոլորովին չընդդիմացավ:

Իսկ քիչ հետո մենք միմյանց պատմում էինք մեր սիրո մասին և բացատրում էինք այն «մութ և անհասկանալի» կետերը, որոնք եղել էին մեր «պատմական» շրջանում...

11

Հինգ օր հետո Սոնան գնաց: Այսպիսով վերջացավ մեր փոքրիկ, համառոտ սերը:

Հիմա, այդ օրերից հետո, անցել են մի քանի տարիներ:

— Ինչո՞վ վերջացավ,— երևի կհարցնեք դուք:

— Կիսատ մնաց,— կպատասխանեմ ես:

Երբ ես գնացի կայարան՝ ճանապարհ դնելու Սոնային, վերջին րոպեին ասացի.

— Սոնա, մենք կամուսնանանք:

Բայց նա ինձ պատասխանեց տխուր.

— Ո՞վ գիտե, կլինի՞ այդպես...

Այդպես չեղավ:

Տարածության հեռավորությունն իրենն արեց, ժամանակը՝ իրենը: Եվ մի՞թե արևոտ հինգ ցերեկների մեր անմեղ սերն այդքան ուժեղ էր կապել մեզ միմյանց: Այդպես չէր: Այդպես չէր մտածում Սոնան: Եվ այդ էր պատճառը, որ երբ ես լսեցի, թե նա ամուսնացել է, բոլորովին չզարմացա:

Այդ բոլորից մնաց մի լավ հուշ:

Այսօր, երբ ամուսինը նրան ծանոթացրեց ինձ հետ, և ես ասացի՝ «մենք ծանոթներ ենք», նա պատասխանեց՝ «մի՞թե»... Ինչո՞ւ ասաց այդպես...

Չգիտեմ: Այնուամենայնիվ, երբ այսօր նա ասաց՝ «մի՞թե», ես տեսա, թե ինչքան փոխվել է նա այն օրվանից, երբ կաշվե բաճկոն էր հագնում և գլխին կապում էր կարմիր գլխաշոր:

Իսկ ես, չնայած որ անցնում են տարիները, և կուստոմսը՝ գրպանումս, մազերը՝ դեմքիս վրա վկայում են այդ մասին, մնացել եմ նախկինը: Ես «մի՞թե» չէի ասի, ոչ: Ես հիմա էլ նույնն եմ, նույն կոմերիտականը:

Ես սիրում եմ իմ անցյալը՝ այնտեղ, կոմերիտական ակումբում: Ես սիրում եմ իմ և քո սիրո հուշը, Սոնա...

Ես սիրում եմ քեզ, Սոնա, իմ վառ երիտասարդության անցյալ…

1928